



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ
ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԲԱՐԵՐԱՐ ՏԻԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱԿԻՆՅԱՆԻՆ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԿԻՆՅԱՆԻՆ
ՈՂԶՈՐՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ս Ի տ Գ Է Ն

Ողորմութեամբը Աստուծոյ Ամենակալին շէն ու պայծառ են մեր եկեղեցական համայնքները ամբողջ հայ սփիւռքի տարածքի վրայ, շնորհիւ մեր պանդուխտ ժողովուրդի ամուր հաւատքին, շնորհիւ մեր հոգևոր ու կրթական մշակներու անխոնջ գործունէութեան ու շնորհիւ բարեպաշտ Մեր զաւակներու հոգատար վերաբերումին և առատաձեռն մոփրաբերումներուն:

Երջանիկ է մահ Աստուծոյ հայոց գաղութը այս տեսակէտէն, որ իր ծոցին մէջ Ձեզ նման բարեպաշտ, հոգատար ու սրտով բարի անձնատրութիւն մը ունի, որ պատիւ կը բերէ մեր եկեղեցիին ու ազգին:

Դուք, յարգարժան Տիար, երկար տարիներէ ի վեր իրօք որ նախախնամական դեր կատարած էք և կը շարունակէք կատարել, Սիտնէյ քաղաքի հայ համայնքին մէջ, իբրև բարեպաշտ ու առաքինի անձնատրութիւն, իբրև համերաշխաւեր ու խաղաղարար ոգի, իբրև առատաբաշխ բարերար՝ եկե-

ղեցական, կրթական ու մշակութային ազգաշէն ձեռնարկներու բարեյաջող կենսագործման ի խնդիր:

Ի պատկառումն Ձեր բարերարութեանց, վերջերս Դուք ուրախացուցիք Մեզ, Ձեր՝ յիսուն հազար դոլլարի ընծայով յօգուտ Մայր Աթոռիս գրադարանի շէնքին, որ յետ այսու պիտի կրէ Ձեր պատուական անունը, յանձնողս յուշ մեր օրերու և ապագայ սերունդներուն: Ուրախացուցիք Մեզ նաև Ձեր շինարար նոր մեծ ծրագրովը յօգուտ բաղաբիդ Հայ մշակութային հաստատութեան, որով կարևոր չափով մը սատարած պիտի ըլլաք գաղութիդ հայապահպանման նուիրական առաքելութեան, զոր Մենք ջերմապէս կը գնահատենք:

Այսպիսով, Դուք իբրև մեծագործ բարերարը Սիոնէյի հայ համայնքին և հարազատը Մայր Աթոռիս, կարող էք արդար հպարտութեամբ Ձեր կուրծքին վրայ կրել սուրբ Գրիգոր Լուսաւորչի շքանշանը, վստահ ըլլալով թէ Մեր աղօթքները միշտ Ձեզի հետ են Մեր բարձր գնահատանքին հետ միասին:

Այսու Մեր կոնդակով կրկին անգամ սուրբ Էջմիածնէն Ձեզի կը յղենք Աստուծոյ օրհնութիւնը, մաղթելով որ Տէրը շնորհէ Ձեզի ևս երկար տարիներ՝ քաջառողջութեամբ, բարի գործոց յաջողութեամբ ու ընտանեկան երջանկութեամբ:

«Ողջ լերուք զօրացեալ սուրբ Հոգով և յաւետ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

Գալստիէ Ռ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի 5-ձ յունիսի
1976 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԻԵ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 841

